




Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

ԱՆՁՐԵԻ.



ոնաւումենէն զատ ի՞նչ օգուտներ կընէ անձրեւը երկրիս.

— Ա. Մէգը քիչ մը ածխային թութու եւ աւշակ ունենալով՝ երկրիս պտղաբերութիւնը կաւելցընէ.

Բ. Մթնոլորտին ապականեալ արտաշնչութիւնները կմաքրէ.

Գ. երկրիս երեսի զանազան աղտեղութիւնները կլուանայ կսրբէ:

Ինչէ՞ն կրնայ իմացուիլ թէ անձրեւի ատեն օդոյն խտութիւնը կպակսի.

— Ասկէց կիմացուի որ ծանրաչափին մէջի սնդիկը՝ որ օդոյն խտութեանը համեմատ կբարձրանայ՝ անձրեւի ատեն կցածնայ:

Սպունգ մը որ ջրով լեցուի՝ ինչէ՞ն է որ կը խոշորնայ.

— Վասն զի ջուրը անոր ծակերուն մէջ կմըտնէ հերանման ձգողութեան օրինօք, եւ՝ զանգուածը կընդարձակէ:

Յդը խոնաւ եղած ատենը ջուծակին լարերը ինչո՞ւ կկտրին.

— Վասն զի օդոյն խոնաւութիւնը լարին բարակ ջղերուն մէջ կծափանցէ ու կծուցընէ. եւ որովհետեւ այն թելերը կհաստանան, լարերուն պնդութիւնն ալ կաւելնայ ու կփրթին:

Թաց թուղթը ինչո՞ւ համար կկռնձմըտի.

— Վասն զի անհաւասար կերպով կծծէ խոնաւութիւնը: Որ կտորներն որ աւելի թրջուած են՝ կհաստանան. եւ որովհետեւ բովընտի չեն կրնար տարածուիլ՝ դէպ իվեր կուռին ու կռնձմըտած կերեւին:

Թաց Թաց գուրպայ հագնելը ինչո՞ւ համար դժուար է.

— Վասն զի նախ, խոնաւութիւնը թելերուն մէջ կմտնէ ու զանգուածնին կմեծցընէ. ուստի գուրպաներն ալ իրենց առածգութիւնը կկորսընցընեն.

Երկրորդ, խոնաւութիւնը պատճառ կլինի որ գուրպաները մարդուս կաշիին կփակչին:

Ինչէ՞ն է որ երբեմն անձրեւի մօտ ատեն ձրագներն ու կանթելները կչըթըրտան.

— Վասն զի բոցոյն տաքութեամբը օդոյն խոնաւութիւնը յանկարծակի շոգի կդառնայ. այն շոգին պատրուզին թելերուն մէջ կթափանցէ ու ձրագին չթըրտալուն պատճառ կլինի:

Ինչո՞ւ համար դռներն անձրեւի ատեն կուռին, ու չոր օդ եղած ատենը կքաշուին.

— Վասն զի օդոյն խոնաւութիւնը փայտին մանր ծակերուն մէջ կմտնէ, մանրաջիւերն իրարմէ կհեռացընէ եւ այնպէս դրան մեծութիւնը կաւելցընէ: Իսկ օդ եղած ատենը փայտին խոնաւութիւնը կցնդի, ծակտիքը կկըծկին, եւ դուռը կազտիկնայ:

Ինչէ՞ն է որ անձրեւի մօտ ատեն, ինչպէս նաեւ մէգ պատած ժամանակը, երբեմն ծանր հոտ մը կլինի օդոյն մէջ.

— Վասն զի օդոյն խոնաւութիւնը չթողուր որ ապականեալ նիւթոց թռչական մասնիկները վեր ելնեն ու ցրուին մթնոլորտին մէջ:

Ինչէ՞ն է որ անձրեւ գալու մօտ ատեն՝ ծաղկները սաստիկ ու անոյշ հոտ մը կբուրեն.

— Վասն զի նախ, օդոյն խոնաւութենէն ծաղկներուն հոտաւէտ մասունքը կարգելուին ու վեր ելնել ցրուիլ չեն կրնար.

Երկրորդ, բուսոց մէջ անուշահոտ իւղային մասունք կան որ սաստիկ խոնաւութիւն տեսած ատեննին միայն դուրս կուտան:

Ինչո՞ւ համար անձրեւ գալէն առաջ ձիերը եւ ուրիշ քանի մը տեսակ կենդանիք վզերնին կերկընցընեն ու օդ կծծեն.

— Վասն զի բուսոց եւ խոտերուն հոտը ծծել կսիրեն:

Ինչո՞ւ համար անձրեւի մօտ ատեն ծիծառները խիստ ցածէն կթռչին.

— Վասն զի անոնց փնտռած միջատները օդոյն վերի ցուրտ կողմերէն դէպի գետնին երեսի տաք օդը իջած կլինին:

Ձկնկուլներուն ծովեզերքը ժողվուիլը ինչո՞ւ համար անձրեւի նշան է.

Վասն զի ձկները օդուն աւրուելու մօտ ատենները ջրին երեսէն վար կիջնան, այն թռչուններն ալ կստիպուին ցամաքը ելնել որ որդ ու ճճի ուտեն:

Ինչո՞ւ համար *պէսիկ* ըսուած թռչունները փոթորկի ատեն դէպի ծովը կթռչին.

— Վասն զի այնպիսի մանր ճճիներով կապրին որ փրփրած ալիքներուն մէջ կգտնուին:

Պետիկը տեսակ մը ծովու բադ է, եւ *պէսիկ* (*pétrel, petrello*) այսինքն *պէսրոսիկ* ըսուած է՝ սրբոյն Պետրոսի ծովուն վրայ քալելուն նմանութենէն:

Անձրեւի մօտ ատեն ծուխը ինչո՞ւ վար կընկնի.

— Վասն զի նախ, օդը խիտ չլինելով՝ չկրնար ծուխը դիւրաւ վեր վերցընել.

Երկրորդ, օդոյն խոնաւութիւնը ծուխին հետ կխառնուի ու աւելի կծանրացընէ զայն:

Մոխրի անձրեւին պատճառն ի՞նչ է.

— Անձրեւը մթնոլորտէն անցնելու ատեն՝ հետը մէկտեղ երբեմն հրաբուխի մը ծուխը՝ մոխիրը եւ ուրիշ փոշիները վար կբերէ:

Արեան անձրեւին պատճառն ի՞նչ է.

— Այս երեւութին պատճառ՝ երբեմն հանքային բարակ ու կարմիր փոշիներն են որ օդուն մէջ կգտնուին, երբեմն ալ ծաղկած բոյսերուն կարմիր փոշիները.

Երբեմն եւս մանր մանր կարմիր որդերու կազմութիւնն, որ անձրեւին հետ մէկտեղ վար կթափին:

Ծծումբի անձրեւին պատճառն ի՞նչ է.

— Բուսոց դեղին փոշին է որ անձրեւին հետ վար կթափի:

Մանանայի, խիճերու, քարի, ցորենի եւ ասոնց նման բաներու անձրեւին պատճառն ի՞նչ է.

— Նախ, հովին սաստկութիւնը, որ գետնին երեսը կելնէ ու զանազան նիւթեր մինչեւ բարձր տեղուանք հանելէն ետեւ՝ վար կթափէ անձրեւի հետ.

Երկրորդ, երբեմն հրաբուխները իրենց բերնէն քար, փոշի, մոխիր կժայթքեն, որ նորէն գետին կթափին:

Այրարատայ քովերը 1727-ին եկած մանանայի անձրեւը տեսակ մը մամուռ կամ լոռ (*kounali*) էր:

Գորտի ու ձկներու անձրեւին պատճառն ի՞նչ է.

— Հովին սաստիկ բռնութեամբը այն կենդանիները երբեմն մինչեւ շատ բարձր տեղեր կը վերանան, ու հովը իջնալու ատեն իրենք ալ վար կթափին:

Խ Ո Ր Հ Ր Գ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ե Ր Ա Յ

Երբ նուրը նկատողութեամբ մի աչքներս ձգեմք իսկզբանէ անտի պատրաստուած բընութեան բոլոր եղելութեանցը վերայ, իսկոյն կտեսնեմք որ Նախախնամութիւնը մարդկային ազգիս վիճակը բարւոքելու համար՝ իւր ստեղծած բազմատեսակ օրինակներէն իզատ՝ հանապազօրեայ գաղափար մի եւս թողեր է մեր աչքին առջեւ:

Այս սքանչելի գաղափարը մարդկային կեանքը սուսածն է, որով մարդս ծննդենէն մինչեւ իմահ բիւրաւոր առարկաներու կհանդիպի, եւ յորում ամենայն չարութիւնք եւ բարութիւնք պատահելով՝ իբրեւ ճշմարիտ ու փորձուած եղելութիւնք՝ օրինակ կդառնան թէ՛ նոյն ժամանակի մարդկանց եւ թէ՛ ապագայից համար:

Նախախնամութեան սահմանած այս սքանչելի օրինակին արժողութիւնն ու օգուտը՝ մարդիկ շատ ուշ սկսան հասկանալ ու յարգել. այս պատճառաւ հին մարդկանց շատերը՝ նոր ոտք ելած տղայի մը պէս դէպի այն ծովը կվազէին, ուր իւրեանց նախնիքը հաղարաւոր սխալական դիպումներով, կամ անձամբ անձին փորձել ուղելով՝ մտեր ու անհետացեր էին նորա անյատակ անդունդներուն մէջ:

Եօթնեւտասներորդ դարուն՝ երբ եւրոպայի մէջ ուսումն ու գիտութիւնը աշխարհաշէն մարդկանց ձեռք սկսաւ աշխարհից չորս կողմը տարածուիլ, երբ ընկերական եւ քաղաքական վիճակը սկսաւ բարեկարգուիլ, երբ աշխարհիս նախնի ընակչաց գործերը հին ազգաց մատենադարաններէն սկսան հաւաքուիլ, եւ իբրեւ պատմութիւն՝ տպագրութեամբ սփռիլ ընդ ամենայն երկիր, եւ երբ կարգալով տեսան որ ապագայք շատ անգամ նոյնպիսի սխալանաց հանդիպեր ու վնասներ կրեր են, ինչպէս որ քանի մը տարի յառաջ իւրեանց նախնիքը, իսկոյն իմացան որ կենցաղօգուտ գաղափարներուն մէկը, — մանաւանդ թէ գլխաւորը, — այսինքն մարդուս անցեալ կենաց եւ վարուց ճիշդ նկարագիրը՝ երեսի վերայ մնացած է հին ժամանակի տգիտութեան վարագուրին տակ. ուստի եւ սկսան մեծ եռանդով իրենց ձեռք բերած տեղեկութեանցը համեմատ՝ արժանաւոր նախնեաց վարքը գրելով՝ վերստին կենդանացնել աշխարհիս մէջ նոցա արժանայիշատակ գործերը, եւ միանգամայն օրինակ թողուլ ապագայիցս:

Եւ ահա այս աշխատութիւնը կենսագրութիւն կկոչուի: Ամենէն առաջ տեսնեմք թէ